ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/351

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Սիսիանի հաց» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.12.2021թ.-ի թիվ 26/26-1/21058-2021 գրությամբ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 15.12.2021թ.-ի թիվ 01/61-31281 գրության հիման վրա, 21.12.2021թ.-ին «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 21.12.2021թ.-ին:

23.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/351 համարի ծածկագիրը:

29.12.2021թ.-ին, 13.01.2022թ.-ին և 20.01.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 13.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 20.01.2022թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 15.12.2021թ.-ի թիվ 01/61-31281 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով կենտրոնացված կարգով իրականացվող սննդամթերքի գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն և «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Մասնակիցներ): Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Որոշմամբ 3-րդրդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ն, 19-րդ չափաբաժնի մասով՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն:

Օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո, 25.11.2021 թվականին, էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով Մասնակիցներին ներկայացվել է

պայմանագրեր կնքելու, պայմանագրի և որակավորման ապահովումներ ներկայացնելու առաջարկներ:

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում համակարգում չի մուտքագրել պայմանագիրը և չի ներկայացրել ապահովումները:

«Սիսիանի Հաց» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում համակարգում մուտքագրել է պայմանագիրը, սակայն չի ներկայացրել ապահովումները:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Մասնակիցները զրկվել են պայմանագրեր կնքելու իրավունքից:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով առաջարկում եմ Մասնակիցների նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Սիսիանի հաց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 23.12.2021թ.-ին գրությամբ դիմել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.12.2021թ.-ի թիվ 26/26-1/21058-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ն ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Սիսիանի հաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՅ-ԼՕ-2021/351 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված թիվ ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար և վերջինս ճանաչվել է Ընթացակարգի 3-րդ Չափաբաժնի մասով ընտրված մասնակից:

Այնուհետև՝ գնահատող հանձնաժողովի կողմից 25.11.2021թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու, պայմանագրի և որակավորման ապահովումներ ներկայացնելու առաջարկները, համապատասխանաբար վերջնաժամկետ է սահմանվել 09.12.2021թ. ներառյալ:

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում, այն է՝ համակարգի միջոցով 09.12.2021թ. ներկայացվել է ստորագրված և կնքված պայմանագիրը, իսկ պայմանագրի և որակավորման ապահովումները՝ ներկայացվել է Պատվիրատուին <<ՀԱՅՓՈՍ>> ՓԲԸ-ի միջոցով նույն՝ 09.12.2021թ.:

Սակայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրության համաձայն՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված և կնքված պայմանագիրը, սակայն չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները՝ ինչն էլ հիմք ընդունելով հանձնաժողովը որոշել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի "ա" ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ... մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված":

Ինչպես արդեն հայտնել ենք, «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված թիվ ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և ճանաչվել է Ընթացակարգի 3-րդ Չափաբաժնի մասով ընտրված մասնակից:

Այնուհետև՝ գնահատող հանձնաժողովի կողմից 25.11.2021թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու, պայմանագրի և որակավորման ապահովումներ ներկայացնելու առաջարկները, համապատասխանաբար վերջնաժամկետ է սահմանվել 09.12.2021թ. ներառյալ:

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում, այն է՝ համակարգի միջոցով 09.12.2021թ. ժամը՝ 16:46-ին ներկայացվել է ստորագրված և կնքված պայմանագիրը, իսկ պայմանագրի և որակավորման ապահովումները՝ ներկայացվել է Պատվիրատուին «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի միջոցով 09.12.2021թ ժամը՝ 16:37-ին:

Սակայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրության համաձայն՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված և կնքված պայմանագիրը, սակայն չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները՝ ինչն էլ հիմք ընդունելով հանձնաժողովը որոշել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ հաշվի առնելով, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի գործունեության (գտնվելու վայրի) հասցեն ք. Սիսիանն է, իսկ Պատվիրատուն գտնվել է Երևան քաղաքում, ապա ՍՊԸ-ն այդ պատճառով է որոշում կայացրել ստորագրած ապահովումները՝ օրենքով սահմանված կարգով ներկայացնել Պատվիրատուին փոստային առաքման միջոցով:

Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն համաձայն՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 3-րդ չափաբաժնի մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից /ըստ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրության՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում կնքված ապահովումները չի ներկայացել Պատվիրատուին/:

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

Այսպիսով, «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն, խստիվ պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց (25.11.2021թ.) հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում (26.11.2021թ.-մինչև 09.12.2021թ. ներառյալ), այն է՝ 09.12.2021թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած որակավորման և պայմանագրի ապահովումները օրենքով սահմանված կարգով ներկայացրել է Պատվիրատուին, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում կնքված պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումները չի ներկայացրել Պատվիրատուին /տես՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն/:

Հատկանշական է, որ 09.12.2021թ. «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված ապահովումները՝ ինչն էլ ապացուցում է այն հանգամանքը, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, ավելին, օրենքով թույլատրելի եղանակով Ընկերությունը ստորագրված ապահովումները ներկայացրել է Պատվիրատուին, սակայն Պատվիրատուն անտեսելով վերոհիշյալը՝ որոշել է զրկել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված պայմանագիր կնքելու իրավունքից:

Մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ... մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված: Իսկ ինչպես արդեն նշել ենք, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը

սահմանում է, որ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի և պատվիրատուին ներկայացնի այդ պայմանագիրը, ինչը տվյալ դեպքում կատարել է:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ խնդրում ենք «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2021/351 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի կողմից կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերման նպատակով 25.10.2021թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Աճուրդ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն:

iii. «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.11.2021թ.-ին կայացված նիստի թիվ 5 արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն:

v. 08.11.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր:

vi. Պատվիրատուն 25.11.2021թ.-ին eauction.armeps.am համակարգի միջոցով Մասնակցին ներկայացնելով «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ պայմանագիր կնքելու նպատակով Մասնակցի կողմից պետք է ներկայացվի, որակավորման ապահովում՝ պայմանագրի գնի 15 տոկոսի չափով, պայմանագրի կատարման ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով, տուժանքի մասին համաձայնության կամ կանխիկ փողի ձևով: Որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին համապատասխան գրությամբ: Միաժամանակ խնդրել են ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից օրենքով սահմանված ժամկետում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատել պայմանագիրը և կցել համակարգում: Մասնակցի կողմից հաստատված պայմանագիրը և վերը նշված ապահովումները, նշված ժամկետում չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիր ստորագրելու իրավունքից:

vii. 07.12.2021թ.-ին eauction.armeps.am համակարգի միջոցով Մասնակցին տեղեկացվել է, որ վերջինիս կողմից ներկայացվող պայմանագրի և ապահովումների ներկայացման վերջնաժամկետը լրանում է 09.12.2021թ.-ին: Սահմանված ժամկետում անհրաժեշտ է ներկայացնել պայմանագիրը և ապահովումները, հակառակ դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիր կնքելու իրավունքից:

viii. Հանձնաժողովի 10.12.2021թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում համակարգում մուտքագրվել է պայմանագիրը, սակայն չի ներկայացվել ապահովումները, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

ix. Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի՝ 36012/2, կոդը՝ DLE0101391172AM/ համաձայն՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 09.12.2021թ.-ին պատվիրված նամակով «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին (հասցե՝ ք. Երևան, Արգիշտի 1) ուղարկել է առաքանի:

x. www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 36012/2, կոդը՝ DLE0101391172AM/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 15.12.2021թ.-ին, ժամը 13:25-ին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.12.2021թ.-ի թիվ 26/26-1/21058-2021 գրությամբ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները…..:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-

րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Կենտրոնացված կարգով սննդամթերքի գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, կենտրոնացված կարգով սննդամթերքի գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից

էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերման նպատակով 25.10.2021թ.-ին հայտարարված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 10.11.2021թ.-ին կայացված նիստի թիվ 5 արձանագրության 2.1-րդ կետով

արձանագրվել է, որ 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն, ինչով պայմանավորված Պատվիրատուն 25.11.2021թ.-ին eauction.armeps.am համակարգի միջոցով Մասնակցին ներկայացնելով «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ պայմանագիր կնքելու նպատակով Մասնակցի կողմից պետք է ներկայացվի, որակավորման ապահովում՝ պայմանագրի գնի 15 տոկոսի չափով, պայմանագրի կատարման ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով, տուժանքի մասին համաձայնության կամ կանխիկ փողի ձևով: Որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին համապատասխան գրությամբ: Միաժամանակ խնդրել են ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից օրենքով սահմանված ժամկետում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատել պայմանագիրը և կցել համակարգում: Մասնակցի կողմից հաստատված պայմանագիրը և վերը նշված ապահովումները, նշված ժամկետում չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիր ստորագրելու իրավունքից: Իսկ 07.12.2021թ.-ին eauction.armeps.am համակարգի միջոցով Մասնակցին տեղեկացվել է, որ վերջինիս կողմից ներկայացվող պայմանագրի և ապահովումների ներկայացման վերջնաժամկետը լրանում է 09.12.2021թ.-ին: Սահմանված ժամկետում անհրաժեշտ է ներկայացնել պայմանագիրը և ապահովումները, հակառակ դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիր կնքելու իրավունքից: Հանձնաժողովի 10.12.2021թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում համակարգում մուտքագրվել է պայմանագիրը, սակայն չի ներկայացվել ապահովումները, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործում առկա՝ Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի՝ 36012/2, կոդը՝ DLE0101391172AM/ համաձայն՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 09.12.2021թ.-ին պատվիրված նամակով «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին (հասցե՝ ք. Երևան, Արգիշտի 1) ուղարկել է առաքանի: www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 36012/2, կոդը՝ DLE0101391172AM/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 15.12.2021թ.-ին, ժամը 13:25-ին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն, հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 25.11.2021թ.-ին, էլեկտրոնային եղանակով

ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ 09.12.2021թ.-ին, կապի կազմակերպությանն է հանձնել պահանջված փաստաթղթերը, որը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով համարվում է ժամկետում հանձնված:

Ամբողջացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուն կարող էր Կարգի 45-րդ կետով սահմանված ու իր վրա դրված պարտավորությունը կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների հաշվառմամբ, որի արդյունքում ստանալով «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ուղարկված ապահովումները կհամարվեր ժամկետում ներկայացված, ուստի և պայմանագիրը կնքված:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն, որպես ընտրված մասնակից, Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ 09.12.2021թ.-ին, Պատվիրատուին ներկայացրել է պայմանագիրը և ապահովումները, որպիսի պայմաններում Մասնակիցը չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.12.2021թ.-ի թիվ 26/26-1/21058-2021 գրությամբ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/351 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**